

**«COVID 19- ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ԽՈՑԵԼԻ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ  
«ԷԿՈԼՈԻՐ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԿ**

**« ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԵՎ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՑԵԼԻ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ COVID 19-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ»**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

«ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության կողմից իրականացվում է «COVID-19՝ նոր մարտահրավերներ էկոլոգիապես խոցելի համայնքներում» ծրագիրը, որի նպատակն է նպաստել էկոլոգիապես խոցելի համայնքների բնակչության սոցիալ-բնապահպանական իրավունքի պաշտպանությանը COVID-19-ի հետ կապված պայմաններում: Ծրագրի շրջանակներում ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքային և Արարատ գյուղական խոցելի համայնքների բնակչության համար պատրաստվել են տեղեկատվական փաթեթներ, որտեղ ներառված են բնակիչների համար COVID-19-ով պայմանավորված իրազեկման թերթիկներ, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի մեղմացմանն ուղղված ՀՀ կառավարության սահմանած միջոցառումների սեղմագրերը:

Բնակիչների և համայնքների ղեկավարների համար կազմվել է Ծրագրի խնդիրներին առնչվող հարցաշար, ինչի պատասխանների, անցկացրած հարցազրույցների վերլուծությունն էլ հիմք է հանդիսացել սույն հաշվետվության համար:

Երևան, 2020թ.

## **ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՑԵԼԻ ԿՈՂՄԵՐԸ**

Մեծ թվով սոցիալապես անապահով ընտանիքների առկայություն, աշխատատեղերի բացակայություն, բնակիչների անվճարունակություն, համայնքների ռոռզման ջրի պակաս, բնակավայրերի կանաչ գոտիների պակաս, մշակովի հողերի պակաս, խմելու ջրի ոչ բավարար որակ, քանակ և դրա ներքին ցանցի վերանորոգման անհրաժեշտություն, ներհամայնքային փողոցների ոչ-ասֆալտապատ վիճակ և անբարեկարգ միջհամայնքային ճանապարհներ և դրանց վերանորոգման հրատապություն, աղբահանության անբավարար վիճակ, COVID-19-ով և հայ-ադրբեջանական պատերազմական վիճակներով պայմանավորված առողջապահական, կրթական, սոցիալ-հոգեբանական, դեմոգրաֆիական նոր մարտահրավերների հաղթահարման դժվարություններ:

Համայնքների հիմնախնդիրների մեջ կարևորվում է ռոռզման ջրի հիմնախնդիրը, մարզական համալիրի վերանորոգումը, փողոցների լուսավորվածությունը, աշխատատեղերի ստեղծումը, քաղաքացիական պաշտպանության օբյեկտների կառուցումը, առկանների վերանորոգումը:

### **ՇԱՀԱՌՈՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԼՈՒԲԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

#### **Քաղաք.Արարատ**

Մակերեսը՝ 27.69կմ<sup>2</sup>

Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ռոռզման գոտում: Ունի օգտակար հանածոներ, դրանցից առավել նշանավոր են մոտակա Սալակիթ լեռան կրաքարը: Շրջակայքում կան կվարցի և օնիքսային սև մարմարի պաշարներ, որի մշակումից ստացվում են դեկորատիվ սալիկներ: Քաղաքի մոտ է գտնվում հիդրոկարբոնատակալցիումային հանքային բուժիչ ջուրը:

Համայնքի բնակչությունը կազմում է 19533 մարդ, որից 47% տղամարդիկ են, իսկ կանայք՝ 53%: Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 28%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 60%, հետաշխատունակները՝ 12%: Պատերազմական իրավիճակում Արցախից ունեցել են 670 հոգի տարահանվածներ, այդ թվում նաև Արարատի նախկին բնակիչներ:

Համայնքում գործում է 6 հանրակրթական դպրոց, որից մեկը՝ ավագ, մեկը՝ միջնակարգ և չորսը՝ հիմնական, աշակերտներների ընդհանուր 2252 թվով: Համայնքում գործում է 4 մանկապարտեզ՝ 457 սանով: Ունի երաժշտական դպրոց: Համայնքում գործում է «Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն և ՈԿՖ բանավանի պոլիկլինիկական: «Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սպասարկում է Արարատ քաղաքային համայնքի և այլ բնակավայրերի շուրջ 36 հազար բնակչի:

Տնտեսության տեսակետից քաղաքի մասնագիտացման ճյուղը ծանր արդյունաբերությունն է: Այստեղ գտնվում է ցեմենտի գործարանը, և ոսկու կորզման ֆաբրիկան: Քաղաքում կան նաև գինու-կոնյակի և պահածոների արդյունաբերության ձեռնարկություններ:

Համայնքը գուրկ է մշակելի հողատարածքներից, չունի արոտավայր, հողագործությունը և անասնապահությունը զարգացած չեն: Զբաղվում են թռչնաբուծությամբ: Քաղաքում ցեմենտի և ոսկու գործարաններով պայմանավորված աղտոտված է մթնոլորտային օդի ավազանը:

Համայնքին սպառնացող տեխնածին կամ բնածին աղետների ամբողջականությունը դեռևս ուսումնասիրված չէ: Մպառնացող արտաքին վտանգը կանխելու նպատակով համայնքում վերջին շրջանում կազմվել է բնակչության տարիանման հանձնաժողով, մշակված է բնակչության տարիանման գործողությունների պլան: Համայնքում առայժմ չի իրականացվել բնակչության փորձնական տարիանման աշխատանք, չի իրականացվել տեղական մակարդակում խոցելիության և կարողությունների գնահատման արևել գործողություն: Աղետների ռիսկի խնդրի գնահատումը կարևոր է համայնքին սպառնացող աղետների կանխարգելման համար: Հետևություն անելով ներկա պատերազմական իրավիճակից, համայնքի սահմանամերձ գոտում գտնվելու կարևորությունից՝ համայնքապետարանն իր գերակա խնդիրներից մեկը պետք է դարձնի բնակիչներին այդ ռիսկերից ապահովագրելու միջոցառումների մշակումը:

Հիմնախնդիրներից մեկը Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի բանավանի 6000 բնակիչներին, դպրոցի և մանկապարտեզների կոլեկտիվներին անհանգստացնող շենքերի նկուղային հարկերը ողողող գրունտային ջրերի հեռացման հարցի լուծումն է, համայնքի կոյուղագծերի հիմնանորոգումը, ոռոգման ցանցի կառուցումը:

### **Գյուղ Արարատ**

#### **Մակերեսը 44.11կմ<sup>2</sup>**

Համայնքի բնակչության թիվը կազմում է 8275 մարդ, որից 48% տղամարդիկ են, իսկ կանայք՝ 52%: Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 23%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 61%, հետաշխատունակները՝ 16%: Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքների թիվը՝ 147: Գյուղն ունի 2315 տնտեսություն: Ունի 3 դպրոց՝ 914 աշակերտով, 1 մանկապարտեզ՝ 162 սանով, կապի հանգույց, ամբուլատորիա:

Գյուղը տեղադրված է ծովի մակարդակից 856 մ բարձրության վրա: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Բնական լանդշաֆտները կիսասանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վերածվել են կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում: Գյուղում կան կվարցի և օնիքսային սև մարմարի պաշարներ, որի մշակումից ստացվում են դեկորատիվ սալիկներ:

Գյուղատնտեսական հողերի ոռոգումը կատարվում է Ազատ և Արաքս գետերի ջրերով, խմելու ջուրը բերվում է Գառնիից: Ունի գինու գործարան:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է: Զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ՝ լոլիկ, տաքդեղ, սմբուկ, ձմերուկ, սեխ, ինչպես նաև հացահատիկ: Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Պահուստային հողերը գլխավորապես օգտագործվում են որպես արոտավայրեր և խոտհարքեր:

Համայնքի հիմնախնդիրների մեջ գլխավորը ոռոգման ջուրն է և ոռոգման, խմելու ջրի ջրագծերի, գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակը,

գյուղատնտեսական վերամշակող ձեռնակութայինների ոչ բավարար աշխատանքը, կենտրոնացված աղբավայրի բացակայությունը:

Ըստ Արարատ գյուղական համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի<sup>1</sup> համայնքի բնապահպանական խնդիրներից են՝ շրջակա բնական միջավայրի տարրերի (օդ, ջուր, հող) աղտոտվածությունը, կանաչ տարածքների անբավարար քանակը, համայնքի տարածքում գոյություն ունեցող պոչամբարի արտանետումները, ջրահեռացման համակարգի, մաքրման կայանի և կոլեկտորի բացակայության արդյունքում գյուղատնտեսական հողերի կեղտաջրերով աղտոտվածությունը:

## **ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Արարատի մարզի ինչպես Արարատ քաղաքը և Արարատ գյուղը, այնպես էլ Վեդի քաղաքը, Արմաշ, Գոռավան, Սուրենավան, Ավշար, Երասխավան և Պարույր Սևակ բնակավայրերը կրում են Արարատ քաղաքում երկու խոշոր կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև քաղաքի հարակից տարածքների հանքավայրերի շահագործման բացասական հետևանքները: Տեղի է ունենում մթնոլորտային օդի, մակերևութային և ստորերկրյա ջրերի, հողերի աղտոտում, կենսատեսուրսների կորուստ, ինչն ուղղակիորեն իր ազդեցությունն է թողնում այդ տարածքների բնակչության առողջության վրա, հանգեցնում սոցիալական լուրջ խնդիրների:

Ինչպես Արարատ քաղաքի, այնպես էլ նրան հարակից բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտվում է «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ-ի կողմից մթնոլորտ արտանետվող հանքաքարի, ածխի, կրի փոշիներով, կախյալ մասնիկների, ածխածնի, ազոտի օքսիդների, աղաթթվի, ազոտական և ծծմբական թթվի գոլորշիներով, քսանթազենատի և ցիանաջրածնի գոլորշիներով: Մթնոլորտային օդի աղտոտում տեղի է ունենում նաև «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ-ի ցիանական պոչամբարի տարածքից: Մթնոլորտային օդի աղտոտում տրավերտինի, կավի, հանքաքարի ու ցեմենտի փոշիներով, ածխածնի և ազոտի օքսիդներով տեղի է ունենում «Արարատի ցեմենտի գործարան» ՓԲԸ-ի կողմից ցեմենտի գործարանի շահագործման, ինչպես նաև «Արարատի ցեմենտի գործարան» ՓԲԸ-ի և «Սուլտի գրուպ Սթոուն» ՍՊԸ-ի կողմից Արարատի տրավերտինների բացահանքի և կավերի հանքավայրի շահագործման արդյունքում:

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքի<sup>2</sup> Արարատ քաղաքում կատարված դիտարկումներով փոշու միջին ամսական կոնցենտրացիան 2019թ. հոկտեմբեր ամսին գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) 1.6 անգամ, նոյեմբեր ամսին՝ 1.5 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Քանի որ այլ աղտոտիչների դիտարկումներ չեն իրականացվում լիազոր մարմնի կողմից, ուստի հնարավոր չէ մթնոլորտային օդի աղտոտվածության մասին ստանալ ստույգ տվյալներ:

<sup>1</sup> [http://ararat.mtad.am/programs/. 24892 \(3\).zip\24892\Hamaynqneri tsragrer - ZIP archive, unpacked size 180 161 926 bytes](http://ararat.mtad.am/programs/. 24892 (3).zip\24892\Hamaynqneri tsragrer - ZIP archive, unpacked size 180 161 926 bytes)

<sup>2</sup>

Ստորերկրյա և մակերևութային ջրերի աղտոտում տեղի է ունենում ցիանական պոչամբարից, որն իր մեջ պարունակում է կապար, մկնդեղ, քրոմ և սնդիկ վնասակար և թունավոր էլեմենտներ: Պոչամբարից ջուրը ներծծվում է Կախանովի ջրանցք, որով ոռոգվում են Սուրենավան, Արմաշ, Երասխավան և Պարույր Սևակ համայնքները: Պոչամբարի հարևանությամբ կան նաև 584 հա մակերեսով ձկնաբուծական լճեր, որոնց արտադրանքը բնակչությունն օգտագործում է իր կերակրացանկում:

Հայաստանի Ամերիկյան Համալսարանի կողմից 2016թ. Արարատ քաղաքի մանկապարտեզների և դպրոցների հողի հետազոտություններ<sup>3</sup> արդյունքները ցույց են տվել, որ այդ հողերում մկնդեղի, կոնցենտրացիան կազմում է 7,35-23,94 մգ/կգ /ՀՀ ստանդարտը՝ 2 մգ/կգ/, պղնձինը՝ 11,15-103,4մգ/կգ /ՀՀ ստանդարտը՝ 3մգ/կգ/, կապարինը՝ 25,3-96,57մգ/կգ /ՀՀ ստանդարտը՝ 32մգ/կգ/, սնդիկինը՝ 0,37-2,37մգ/կգ /ՀՀ ստանդարտը՝ 2,1մգ/կգ/: Չնայած այդ արդյունքների արձանագրմանը, հետազոտողները ձեռնպահ են մնում աղտոտվածության և հանքարդյունահանման պատճառահետևանքային կապի քննարկումներից:

Ի հավելումն այս ամենի «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ-ում ընթանում էին ոսկու արդյունահանման գործարանի արտադրողունակությունը 75%-ով ավելացնելու գործընթացներ, ինչի իրագործման դեպքում, ամենայն հավանությամբ, մեծանալու է պոչամբարում կուտակվող թափոնների ծավալը: Հայ-ադրբեջանական պատերազմով պայմանավորված՝ 2020թ-ի դեկտեմբերի դրությամբ սակայն անորոշ է Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի վերազինման հավանականությունը:

Տարածաշրջանի աղտոտվածության և բնապահպանական վտանգների մասին են վկայում վերջին շրջանում արձանագրված հետևյալ դեպքերը՝

1. Ջրաճահճային թոչնատեսակների թվաքանակի անկում՝ պայմանավորված միջազգային կազմակերպության կողմից որպես կարևորագույն թոչնաբանական տարածք քարտեզագրված՝ Արմաշ գյուղի լճակային տնտեսությունների մակերեսների կրճատմամբ <sup>4</sup>:
2. Արարատի 12 մլն. խմ նախագծային ծավալով ցիանային պոչամբարի լցվածության փաստը, որը դեռևս 2014թ. հաշվարկով արդեն իսկ կազմում էր 10,0 մլն. խմ<sup>5</sup>:
3. Արարատի ցիանային պոչամբարում արձանագրված մեծ քանակությամբ թոչունների ոչնչացման դեպքը /Ըստ ստացված տեղեկությունների՝ թոչուններին հավաքել և թաղել են Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի աշխատակիցները՝ անվտանգության աշխատակիցների խիստ հսկողության տակ<sup>6</sup>:
4. Արարատում գործող «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ում ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 2016 թվականի հունվարի 1-ից 2019 թվականի հոկտեմբերի 21-ն ընկած ժամանակահատվածի համար կատարված ստուգումների արդյունքները<sup>7</sup>:

<sup>3</sup> [https://crm.aur.am/files/2016/05/Schools-and-Kindergartens-in-Ararat\\_Final-Report-Armenian.pdf](https://crm.aur.am/files/2016/05/Schools-and-Kindergartens-in-Ararat_Final-Report-Armenian.pdf)

<sup>4</sup> <https://www.ecolur.org/hy/news/water/---/6666/>

<sup>5</sup> [http://www.armecofront.net/wp-content/uploads/2014/07/10003920\\_739963589377041\\_7076073907888297046\\_n.jpg](http://www.armecofront.net/wp-content/uploads/2014/07/10003920_739963589377041_7076073907888297046_n.jpg)

<sup>6</sup> <https://www.ecolur.org/hy/news/mining/---/12341/>

<sup>7</sup> <http://ecoinspect.am/17.02.2020.html>



2017թ-ին «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն Արարատ քաղաքին վճարել է 2150000,0, իսկ Արարատ գյուղին՝ 1970000,0 դրամ գումարի հողի հարկ, ինչպես նաև 2040000,0 դրամ՝ գույքահարկ Արարատ քաղաքային և 20000,0դրամ գույքահարկ՝ Արարատ գյուղական համայնքին: Նույն տարում կատարել է նվիրատվություն՝ 350000,0 դրամի՝ Արարատ քաղաքի մշակույթի տանը և 2000000,0 դրամ գումարի աջակցություն «Արագիլ» վերարտադրողական բժշկության աջակցության հիմնադրամին: Արարատ համայնքին հատկացրել է ավտոբուս: Նույն տարում Ընկերությունը պետական բյուջե է վճարել ընդհանուր 4500000,0 դրամի բնապահպանական հարկ<sup>11</sup>:

2018թ. Արարատի գյուղապետարանին Ընկերությունը վարձակալած անշարժ գույքի դիմաց վճարել է 960000,0 դրամ: Վճարել է գույքահարկ՝ 1100000,0 դրամ Արարատի քաղաքապետարանին, 10000,0 դրամ՝ Արարատի գյուղապետարանին: Վճարել է 2096000,0 դրամ հողի հարկ Արարատի քաղաքապետարանին, 1974000,0 դրամ՝ Արարատի գյուղապետարանին: Նույն տարում Արարատ քաղաքի թիվ 1 մանկապարտեզի վերանորոգման համար ծախսել է 12500000,0 դրամ գումար և ձեռք բերել 4200000,0 դրամի մանկական կահույք: Որպես նվիրատվություն Արարատի համայնքապետարանին է փոխանցել 11000000,0 դրամ գումար: Նույն տարում վճարել է 3451417 դրամ բնապահպանական հարկ<sup>12</sup>:

Բացի ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական միջոցառումներին աղտոտող կազմակերպությունների մասնակցության համար ակնկալվող ֆինանսական ներդրումներից, բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար պոտենցիալ միջոց են նաև «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանվող պետական սուբսիդիաները:

Արարատ քաղաքում բնապահպանական վճարներից ստացված սուբվենցիաներով իրականացված ծրագրերը վերաբերել են ջրերին: 2016թ-ին 4 042 000 դրամով իրականացվել են արտեզյան խորքային հորի նորոգման և գործարկման կամ կոնսերվացված հորի գործարկման աշխատանքներ, մշակվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր: Այդ ենթատեքստում Արարատ քաղաքում 2018թ. իրականացվել է 6210300 դրամ գումարի բնապահպանական ծրագիր, իսկ 2019 թվականին՝ 3177700 դրամի:

## **ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՄԲ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ծրագրի շրջանակներում 2 համայնքում անցկացված հարցազրույցին մասնակցել է 18 բնակիչ՝ 14 կին և 4 տղամարդ, այդ թվում՝ Արարատ քաղաքային և գյուղական համայնքապետարանների ներկայացուցիչներ: Կատարված հարցազրույցների վերլուծությամբ պարզվեց հետևյալը՝

### **Սոցիալական ոլորտ**

1. Հարցման մասնակիցները նշել են, որ համայնքների սոցիալ-տնտեսական կյանքի դժվարությունները կապված են աշխատատեղերի բացակայության, կատարված աշխատանքի դիմաց ստացված ոչ-համարժեք, ցածր աշխատավարձի, ստացված

<sup>11</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/?year=2017&company=12>:

<sup>12</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/?year=2018&company=12>

գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարությունների, հողի և մթնոլորտային օդի աղտոտվածության հետ:

2. Հարցման բոլոր մասնակիցները նշել են, որ COVID-19-ով պայմանավորված նվազել են իրենց ընտանիքի եկամուտները, քանի որ կա՛մ կրճատվել են իրենց աշխատավայրերի՝ սպասարկման ոլորտի ծառայությունների ծավալները, կա՛մ ընտանիքի անդամները չեն մեկնել արտագնա աշխատանքի, կա՛մ առողջապահական և կրթության ծախսերը հոգալու համար կատարվել են չպլանավորված ծախսեր:
3. Ըստ քաղաքապետարանի ներկայացուցիչի՝ համավարակի հետ կապված աշխատատեղերի կրճատումներ չեն եղել, իսկ COVID-19-ի հետ կապված մոտ 1000 արտագնա աշխատանքի չմեկնածների մոտ կեսը օրական 10-12,0 հզ. դրամ վարձավճարով ընդգրկվել են շինարարական աշխատանքներում:
4. Գյուղատնտեսությամբ զբաղվող հարցվածները պատասխանել են, որ COVID-19-ով պայմանավորված արտակարգ դրության օրերին աշխատատեղեր կորցնելու և դրանով պայմանավորված աշխատավարձերի կրճատման վերաբերյալ խնդիրներ չեն ունեցել:
5. Ըստ հարցվածների՝ գյուղատնտեսական աշխատանքների վրա COVID-19-ը թողել է նվազ ազդեցություն, քանի որ ֆերմերները բաց տարածքում են իրականացրել իրենց աշխատանքները:
6. Ըստ Արարատի քաղաքապետարանի ներկայացուցչի, ինչպես ամբողջ Հանրապետությունում, այնպես էլ Արարատ քաղաքում ավելացել են սոցիալական խնդիրները՝ կապված պատերազմի և դրա հետևանքների հետ: Մասնավորապես, Արցախի Հանրապետությունից պատերազմի հետևանքով Արարատ քաղաքում ապաստան է գտել 670 մարդ, որոնց թվում նաև Արարատի նախկին քաղաքացիներ: Այդ առումով քաղաքում արձանագրվել է սոցիալական բեռի ավելացում: Պատերազմի հետևանքով ավելացել է նաև առանց կերակրողի մնացած ընտանիքների հետագա կեցության ապահովման խնդիրը:
7. Համայնքներում արձանագրվում է հուսալքություն՝ կապված պատերազմի աղետալի հետևանքների, պատերազմական դրության թողած հետևանքների լուծման անորոշության և COVID-19-ի համավարակի ընթացքի հետ:

### **Բժշկական սպասարկման ոլորտ, բժշկական հաստատությունների վիճակը**

1. Կորոնավիրուսային վարակվածության վերաբերյալ համայնքի բնակչության իրազեկվածության մակարդակը բավականին բարձր է, գիտեն ախտանշանների մասին, գիտեն իրենց գործողություններն այդ պարագայում: Ըստ հարցման մասնակիցների՝ իրենք հետևում են հակահամաճարակային կանոններին, կրում են շնչադիմակ, ախտահանում են ձեռքերը, օդափոխում են սենյակը, վարակվածության կասկածի դեպքում մեկուսանում են ընտանիքի անդամներից, զանգահարում են ընտանեկան բժշկին, կամ կանչում շտապօգնություն:
2. Ըստ Արարատ գյուղական համայնքի ղեկավարի տեղակալի՝ գյուղը համավարակի տարածման տեսանկյունից տարածաշրջանում առաջատարներից է: Պատերազմական իրավիճակում բնակիչների զգոնությունը նվազել է, վարակվելու մտահոգությունը մղվել է երկրորդ պլան, որն էլ նպաստել է դրա լայն տարածմանը: Իսկ Արարատի քաղաքապետարանի ներկայացուցիչն էլ նշեց, որ COVID-19-ի



տարածման պիկը Արարատ քաղաքում գրանցվել է մայիս-հուլիս ամիսներին, ներկայումս զգալիորեն կրճատվել է վարակակիրների թիվը:



**Նկար 1. Ծրագրի շրջանակներում քննարկում Արարատի քաղաքապետարանի ներկայացուցիչ Անդրեյ Հարությունյանի հետ**

3. Արարատի գյուղապետարանի ներկայացուցիչը նշեց, որ Արարատի ոսկու գործարանում աշխատող համայնքի բնակիչների /ըստ <sup>12</sup> հղման՝ 86 մարդ / համար գործարանը կիրառում էր կանխարգելիչ միջոցառումներ, սակայն վերջին շրջանում այդ հսկողությունը թուլացել է:
4. Համայնքներում գործող բուժապասարկման կետերի կողմից COVID-19-ի իրավիճակի պահանջներին համապատասխան տեղում ստացվող բուժապասարկման որակից և բժշկական ծառայությունների գործիքակազմի հագեցվածությունից գոհ չէ հարցվածներից գրեթե ոչ մեկը: Նրանք նշում են, որ վերջին շրջանում տեղի է ունեցել նաև դեղորայքի գնաձ, ինչը ստեղծել է հիվանդությանը համարժեք դեղերի ձեռք բերման խոչնդոտներ:

#### **Պետական, ՏԻՄ, մասնավոր հաստատություններից ստացվող աջակցության նկարագիրը**

1. ՀՀ կառավարության կողմից իրականացված COVID-19-ի մեղմման սոցիալական ծրագրերից օգտվելու ժամանակ ծագած խնդիրների վերաբերյալ հարցին հարցված բնակիչները պատասխանեցին, որ չեն բախվել որևէ դժվարության, մի մասը, սակայն, նշել է, որ օժանդակության տրամադրման գործընթացում տեղի են ունեցել անհարկի ձգձգումներ:
2. Հարցվածների գերակշիռ մասը պատասխանել է, որ չի օգտվել ՀՀ կառավարության Կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրով սահմանվող օժանդակություններից, բացառությամբ բնական գազի մատակարարման և էլեկտրական էներգիայի մատակարարման դիմաց և 0-18 տարեկան երեխա ունեցող ընտանիքներին տրված միանվագ դրամական օժանդակություններից:

3. Արարատի քաղաքապետարանի ներկայացուցիչը նշեց, որ օժանդակել է մարզապետարանի կողմից տրամադրված օգնության բաշխման գործընթացին: Քաղաքապետարանն իր հերթին, համայնքային այլ ծրագրերից կատարված վերաբաշխման-մասնահանման արդյունքում կարողացել է COVID-19-ի հետևանքների մեղմացման նպատակով 1,2մլն.դրամի օգնություն ցուցաբերել համայնքի կարիքավոր բնակիչներին:
4. Արարատի գյուղական համայնքապետարանի ներկայացուցիչը նշեց, որ համավարակի ժամանակ սահմանված կանոնների և սահմանափակումների մասին համայնքապետարանն իրազեկել է ինչպես բնակիչներին, այնպես էլ համայնքի տարածքում գործող սպասարկման օբյեկտների ղեկավարությանը: Համայնքային բյուջեով սոցիալական օժանդակության համար նախատեսված 6,0 մլն դրամին ավելացվել է ևս 1,2մլն. դրամ գումար համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների համար:



Նկար 2. Հանդիպում Արարատի գյուղական համայնքում

5. Հաշվի առնելով 2020 թվականին ծագած համավարակի և պատերազմական իրավիճակի մարտահրավերների փորձը՝ 2021 թվականի համայնքային բյուջեում համայնքապետարանները նախատեսել են լրացուցիչ ծախսեր:
6. Ըստ համայնքապետարանների ներկայացուցիչների՝ պատերազմական իրավիճակը պարտադրել է կատարելու քաղաքի քաղաքացիական պաշտպանության պլանների վերանայում, ինչպես նաև համայնքներում գոյություն ունեցող թաքստոցների և ապաստարանների գույքագրում:
7. COVID-19-ի պայմաններում հայտարարված արտակարգ և պատերազմական իրավիճակներում Արարատի քաղաքային և Արարատի գյուղական համայնքապետարանների բնակիչները Արարատի ոսկու արդյունահանման ձեռնարկությունից մի քանի անգամ ստացել են սննդի և հիգիենայի պարագաներով փաթեթներ, իսկ Արարատ գյուղական համայնքի 400 բնակիչներին նմանատիպ օժանդակություն է ցուցաբերել նաև Արարատի զինու գործարանը:

## Ուսուցման կազմակերպումը

COVID-19-ի պայմաններում ներդրված հեռավար ուսուցման հետ կապված հարցվածները նշեցին, որ իրենց երեխաները ստացել են ոչ լիարժեք կրթություն: Ունեցել են դժվարություններ՝ կապված համապատասխան համակարգչային տեխնիկայի կամ ինտերնետային կապի խափանման հետ, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական հնարավորություններ չունենալու պատճառով ինտերնետային կապից չեն կարողացել օգտվել: Տարել են սթրեսներ աշակերտ-ուսուցիչ ուղղակի շփման խոչընդոտի չհաղթահարման հետևանքով: Ընդհանուր առմամբ հարցվածներն իրենց երեխաների ստացած դպրոցական և ուսանողական կրթությունը գնահատում են ցածրորակ և ոչ լիարժեք:

## Շրջակա միջավայրը

1. Ըստ Արարատի գյուղական համայնքի ներկայացուցչի՝ Արարատի ոսկու արդյունահանման գործարանի (ԱՌԱԳ) աղեցությունն ավելի շուտ պոչամբարից է, որտեղից կատարվում է ներծծված ստորերկրյա ջրերով համայնքի արտավայրերի աղտոտում ծանր մետաղներով, ինչի բացասական ազդեցությունը կրում են այնտեղ արածող ընտանի կենդանիները: Պոչամբարից ավելի շատ տուժում են այնտեղի աշխատակազմը, քան բուն համայնքի բնակիչները: Արարատի ոսկու գործարանը մթնոլորտային օդի աղտոտվածության վրա ավելի քիչ ազդեցություն է թողնում, քան ցեմենտի գործարանը:
2. Ըստ Արարատի քաղաքապետարանի ներկայացուցչի՝ վերջին տարիներին Արարատ քաղաքում կատարվել են բավականին աշխատանքներ բնապահպանական առումով՝ կառուցվել են կանաչ տարածքների ոռոգման ջրագծերը, ԱՌԱԳ-ի քաղաքին կապող տարածքում կատարվել է ծառատունկ, պոմպերի վերանորոգում: Նա նշեց նաև, որ COVID-19-ի պայմաններում հանրային բնապահպանական ծրագրերի վերաբերյալ լսումներ չեն եղել: Վերջին անգամ փետրվար ամսին եղել է «Գեոոպրոմայնինգ գոլդ» ՄՊԸ-ի ոսկու արդյունահանման գործարանի արտադրողունակությունը 75%-ով ավելացնելու վերաբերյալ հանրային առաջին քննարկումը, սակայն երկրորդ լսումն առ այսօր չի եղել: Այդ ընթացքում չեն կայացվել նաև քաղաքապետարանի ավագանու նիստեր, քանի որ անդամների հիվանդության պատճառով նիստի համար անհրաժեշտ քվորում ապահովել հնարավոր չի եղել:
3. Հարցվածների 100%-ը նշում են, որ համավարակի և պատերազմի ժամանակահատվածում բնապահպանական խնդիրների և ծրագրերի շուրջ համայնքներում հանրային քննարկումներ չեն կազմակերպվել:
4. Բնապահպանական խնդիրների վերաբերյալ իրենց մտահոգությունները հայտնելու համար հարցվածների 42,8%-ը նախընտրում է հասարակական քննարկումներին մասնակցությունը, 28,5%-ը՝ լրատվամիջոցներին ու բնապահպանական ՀԿ-ներին դիմելու՝ և 21,4%-ը բիզնես ոլորտին դիմելու ձևաչափը:

Տեղի բնակիչների և համայնքապետարանների ներկայացուցիչների շրջանում ԷկոԼուրի 2020 թվականի դեկտեմբերի 11-ին կատարած ուսումնասիրությունների, ինչպես նաև նախորդ այցելությունների արդյունքում համայնքներում արձանագրած փաստերի վերլուծությունից պարզ դարձավ, որ համայնքներում COVID-19 համավարակով և պատերազմական իրավիճակով պայմանավորված առաջացել են նոր մարտահրավերներ: Մասնավորապես՝

1. Համայնքներում առկա արտադրական ձեռնարկություններում աշխատելու հնարավորությունը գերծ է պահում բնակչությանը զբաղվածության խնդրից, չնայած արտագնա աշխատանքի մեկնող փոքր թվով բնակիչների համար այդ խնդիրն առկա է, սակայն վերջիններս Հանրապետությունից ելքի սահմանափակման պայմաններում զբաղվել են իրենց գյուղատնտեսական տնտեսություններում կամ շինարարական աշխատանքներում:
2. Ավելացել են լրացուցիչ սոցիալական խնդիրներ, տեղի է ունեցել բնակչության եկամուտների կորուստ:
3. Կրճատվել են սպասարկման ոլորտի, բիզնես ծառայությունների աշխատանքերի ծավալները, տեղի է ունեցել փոքր ու միջին բիզնեսի գործունեության ծավալների կրճատում:
4. Համայնքներում բացակայում են արտակարգ իրավիճակներում, այդ թվում պատերազմական, բնակիչների անվտանգությունն ապահովող թաքստոցները, ուրբապատարանները: Այդ նպատակների համար նախատեսված մասնավոր և բազմաբնակարան շենքերի նկուղները չեն կարող օգտագործվել, քանի որ որպես կանոն, չունեն համապատասխան կոմունիկացիաներ և զբաղեցված են ընտանեկան կամ կենցաղային իրերով:
5. Հեռավար եղանակով ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերման համար բնակչության շրջանում առաջացել է լրացուցիչ ծախսերի անհրաժեշտություն: Ընդհանուր առմամբ հեռավար ուսուցման համակարգը չի ապահովում բավարար կրթական որակ: COVID-19-ի պայմաններում կրթության կազմակերպման ոլորտում առաջացել են տեխնիկական և հոգեբանական դժվարություններ, խնդիր է համակարգչին տիրապետելու բավարար գիտելիքների տիրապետման բացակայությունը:
6. Մահացած, վիրավորված և գերեվարված զինվորներ ունեցող ընտանիքներն, ինչպես նաև ընդհանուր բնակչությունն ապրում է հոգեբանական սթրեսներ, ծագել են նոր սոցիալ-հոգեբանական խնդիրներ:
7. COVID-19-ի դեմ պայքարում ՏԻՄ-երի ներուժի չօգտագործման հետևանքով համավարակի դեմ ձեռնարկված միջոցառումները լիովին չեն իրագործվում: Հատկապես մեծ է սգո արարողությունների ժամանակ մարդկային կուտակումների հետևանքով ծագող վարակման վտանգը: Բնակիչները դեմ են հակավիրուսային կանոնների չպահպանման համար սահմանված վարչական տուգանքի չափերին, քանի որ այն համարում են իրենց եկամուտներին ոչ համարժեք:
8. Բնապահպանական, այդ թվում նաև արոտավայրերի աղտոտման, մթնոլորտային օդի, ջրերի և հողերի աղտոտման, ինչպես նաև խմելու և ոռոգման ջրի սակավության խնդիրները շարունակում են մնալ օրակարգային:
9. Նվազել է համայնքային խնդիրների շուրջ տեղի ունեցող հանրային կարծիքի արտահայտման հնարավորությունը, քանի որ ստեղծված իրավիճակում ժողովրդի կարծիքն իմանալու համար հանրային լսում կազմակերպելը դարձել է անհնարին:

10. Համայնքներում արձանագրվում է հուսալքություն՝ կապված պատերազմական գործողությունների աղետալի սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիկական հետևանքների և COVID-19 համավարակի շարունակական ընթացքի հետ:

## **ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ**

- Ըստ հարցվածների՝ համավարակի արդյունավետությունը կապահովվի, եթե համավարակի դեմ պայքարում մեկտեղվեն տեղական հասարակական ռեսուրսները և տեղի բնակչության ջանքերը: Դա կփոխի անձի վարքը և կբարձրացնի նրա սոցիալական պատասխանատվության աստիճանը:
- Հատուկ ուշադրություն դարձնել գործող բժշկական հաստատությունների արագ վերապրոֆիլավորման մեխանիզմների ներդրմանը, այդ հաստատությունները համալրել հնարավորինս նոր սարքավորումներով և բարձր մասնագիտական կարողությունների տիրապետող բժշկական անձնակազմով: Հոգեբանական սթրեսներ ապրող բնակչության շրջանում կազմակերպել մասնագիտական-հոգեբանական ուսուցողական դասընթացներ:
- Ավելի գործուն և ճկուն սոցիալական աջակցություն ցուցաբերել համայնքների ազգաբնակչությանը:
- Ապահովել բնակչության COVID-19-ի համատարած թեստավորում, այդ ընթացքում սահմանել արտոնություններ բնակչության անապահով խավերի համար: Ուժեղացնել մեկուսացման մեջ գտնվող COVID-19-ով վարակակիրների նկատմամբ վերահսկողությունը:
- Հարկադիր աշխատանքային պարապուրդի մատնված բնակիչների համար առաջարկել արտոնյալ բիզնես ծրագրեր, օժանդակել դրանց իրականացմանը:
- Շարունակել համավարակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը: Հակահամաճարակային քարոզարշավում կարևորել բնակչության շրջանում սոցիալական ինքնագիտակցության և անձի սոցիալական պատասխանատվության ենթամշակույթի բարձրացման բաղադրիչները:
- Ուսումնական հաստատություններում վերանայել «Ռազմագիտություն» առարկայի ծրագրերը, այն մոտարկել ժամանակակից տեխնիկական և մարտավարական պահանջներին:
- Հրատապ լուծում տալ արտակարգ, այդ թվում ռազմական իրավիճակներում բնակիչների անվտանգությունն ապահովող թաքստոցների, ռմբապատարանների կառուցմանը, առկա բազմաբնակարանային և մասնավոր բնակարանների նկուղների, ռեսուրսների գույքագրմանը և ըստ անհրաժեշտության դրանց վերակառուցման և կոմունիկացիոն գծերի անցկացմանը:
- Մշակել տեղական ինքնակառավարման մարմինների և հարակից համայնքներում գտնվող ռազմական օբյեկտների միջև հաղորդակցության և համագործակցության բարելավմանն ուղղված, ինչպես նաև ռազմական իրավիճակներում դրանց կիրարկման մեխանիզմներ:

## **Առաջարկել ՀՀ Արարատի մարզպետարանին**

- COVID-19 համավարակի մարտահրավերներին համահունչ կատարել համապատասխան փոփոխություններ «ՀՀ Արարատի մարզի 2021-2025 թթ.. զարգացման ռազմավարության գործունեության ծրագրում»: Ծրագրում ներառել համայնքների առողջապահական

- ենթակառուցվածքների հզորացմանը, փոքր գյուղատնտեսական բիզնեսի աջակցությանը, սոցիալական խոցելի խմբերի աջակցությանը ուղղված միջոցառումներ, դրանց իրագործման համար փնտրել ֆինանսական աղբյուրներ, այդ թվում դոնոր կազմակերպություններ:
- Արտակարգ իրավիճակներում պետական աջակցության ծրագրերից օգտվողների հասցեականության ապահովման համար վերանայել համայնքներում հաշվառման կանգնած շահառուների ցուցակները, վերագնահատել նրանց իրական կարիքները:

## **2. Առաջարկել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը**

- Քննարկել Արարատ գյուղական համայնքին Արարատի ոսկու արդյունահանման գործարանին և Արարատի ցեմենտի գործարանին «ազդակիր» համայնք ճանաչելու նպատակահարմարության հարցը, քանի որ համայնքը կրում է այս գործարանների բացասական ազդեցությունը ինչպես մթնոլորտային օդի աղտոտման, այնպես էլ ցիանային պոչամբարից վնասական նյութերի արտահոսքի առումով:
- Մշակել Արմաշի լճերը որպես բնության հատուկ պահպանվող տարածք ճանաչելու մասին ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ և այն ներկայացնել հաստատման:
- Տարածաշրջանում հատկապես ցիանական պոչամբարին հարող տարածքներում իրականացնել ստորերկրյա ջրերի և կենսաբազմազանության մոնիտորինգ:

## **3. Առաջարկել ՀՀ առողջապահության նախարարությանը**

- Գտնել միջոցներ ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքային և Արարատ գյուղական համայնքների առողջապահական ենթակառուցվածքների հզորությունների զարգացման համար:
- Համավարակի պայմաններում Արարատ քաղաքային և Արարատ գյուղական համայնքների թիրախային խմբերի առողջապահական հետազոտություններն իրականացնել անվճար:
- Մշակել և ներդնել բնակչությանը հոգեբանական աջակցության ցուցաբերման ծրագրեր:

## **5. Դիմել «Գեոպրոմայնինգ գոլդ» ՄՊ ընկերությանը**

- Մշակել Արարատի ցիանային պոչամբարի անվտանգության ապահովմանն ու վտանգների նվազեցմանն ուղղված ծրագիր, ըստ այդ ծրագրի օրենքով սահմանված կարգով իրականացնել հսկողություն, արդյունքները պարբերաբար ներկայացնել քաղաքացիական հասարակությանը:
- Վերանայել 2014թ. հոկտեմբերի 22-ի N ՊՎ-189 Ընդերքօգտագործման պայմանագրի հավելված 3-ը, այնտեղ ամրագրել Արարատ քաղաքի, Արարատ, Սուրենավան, Արմաշ, Երասխավան և Պարույր Սևակ գյուղերի նկատմամբ սոցիալ-տնտեսական օժանդակության ստանձնման պարտավորություններ:
- Համավարակային իրավիճակներում ձեռնպահ մնալ աշխատատեղերի կրճատումից:

## 6. Դիմել «Արարատցեմենտ» ՓԲ ընկերությանը

- Համավարակային և այլ արտակարգ իրավիճակներում ձեռնպահ մնալ աշխատատեղերի կրճատումից:

- Արտադրության կազմակերպման գործընթացում խիստ պահպանել մթնոլորտային օդի աղտոտման կանխարգելմանն ուղղված ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր միջոցառումները, պահպանել մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման թույլտվության մեջ ամրագրված չափաքանակները և նորմերը: